

ցին, զիսեր զվեճ շիրորումն որ շինեցոց էր՝
 փախեալ եւ ոչ երեկ ի կոչն: Այլ երկու ան-
 եկաց յիւր անունն պատրիարզութիւնն, մինչ
 որ այս Կեսարացի Գրիգոր թիւնաւոր վիշապս
 եւ փառամոռն ինքնին երեկ, բռնութեամբ ան-
 կաւ ի վերայ եւ յինքն գրաւեաց զպատրիարզու-
 թիւնն» (Գարանազոյ, էջ 396-397):

Արդ, այս տողերը՝ գրուած հակառա-
 կորդէ մը, ցոյց կու տան թէ Զաքարիա
 Վանեցի մեծ ջանքերով տապալուելէ յե-
 տոյ, արքունական հրամանագիրը առնուած
 է՝ հակառակ իր անյօժարութեան՝ Կարա-
 պետ վրդ. ի մը անունով, որ չէ ուզած
 պաշտօն ստանձնել և երկու տարի այսպէս
 մնացած է:

Այս շրջանին է որ Կ. Պոլսոյ Հայերը
 կը բանակցին Գրիգոր վրդ. Կեսարացիի
 հետ և զայն կը կոչեն Կ. Պոլիս, և ոչ թէ
 ան կու գայ բանութեամբ, ինչպէս ցոյց
 տալ կ'ուզէ Գարանազոյի:

Այս իրողութիւնը կը հաստատուի վա-
 ռերագիրով մը (*), որ գտած է Հ. Գրիգորի
 Ծ. վրդ. Գալէմքեարեան (տե՛ս Կենսա-
 գրութիւնն Սարգիս Արեւոյ. է Սարգիսեան Ե- ժա-

(*) Անտոնեան Հարց Մատենադարանի թիւ ԾԳ
 գրչագիր ծեռագրին իրրել պահպանակ գործածուած
 է: